ՀՀ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

DOI: 10.52174/2579-2989_2021_2_34

Հիմնաբառեր. *պատմամշակութային զբոսաշրջություն, փորձառական զբոսաշրջություն, մշակութային ժառանգություն, մշակութային տարածք, հուշարձան, ՅՈՒՆԵՍԿՕ, մարքեթինգ, փառատոն*

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ «Կառավարում» մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է, 2019 թ.-ից՝ կառավարման ամբիոնի ասիստենտ: 100-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ հինգ մենագրության և երեք ուսումնական ձեռնարկների հեղինակ և համահեղինակ է:

ORCID - https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

Հայաստանն ունի հին պատմություն և հարուստ մշակութային ժառանգություն, որը գրավում է շատ զբոսաշրջիկների ուշադրությունը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության» ցանկում են ներառված Հաղպատի և Սանահինի, Գեղարդի վանական համալիրները, Էջմիածնի եկեղեցիներն ու Մայր տաճարը, Զվարթնոցի հնագիտական տաճարը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցուցակում են հայկական դուդուկը և դրա երաժշտությունը, հայկական խաչքարերի արվեստը, «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը, հայկական ավանդական հացը՝ լավաշը, հայկական ավանդական խմբային պարը՝ «Քոչարին», հայկական տառարվեստը և դրա մշակութային դրսևորումները: ՀՀ-ում կան 24225 պատմամշակութային հուշարձաններ, սակայն դրանցից ոչ բոլորն են ընդգրկված զբոսաշրջային երթուղիներում: Հոդվածում ներկայացվել է պատմամշակութային և փորձառական զբոսաշրջության զարգացման ռեսուրսային ներուժը ՀՀ-ում, կատարվել են առաջարկներ՝ կապված հայկական մշակութային ժառանգության արժեքների և տարածքների հաշվառմամբ նոր երթուղիների մշակման, փառատոների կազմակերպման, մարքեթինգային միջոցառումների իրականացման և այլ հարակից հարցերի հետ:

ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը մշակութային զբոսաշրջությունը բնորոշում է որպես ճանապարհորդություն, որի նպատակն է այցելել վայրեր և մասնակցել միջոցա-

ռումների, որոնց պատմական և մշակութային արժեքը մարդկանց դարձնում է համայնքի մշակութային ժառանգության մի մասը[1]: Ըստ Հուշարձանների և տեղանքների միջազգային խորհրդի (ICOMOS)՝ մշակութային և մշակութային-ճանաչողական զբոսաշրջությունը կենտրոնանում է մշակութային միջավայրի վրա, ինչը կարող է ներառել զբոսաշրջային դեստինացիայի մշակութային և պատմական վայրերը կամ պատմամշակութային ժառանգությունը, տեղի բնակչության արժեքները և կենսակերպը, արհեստները, սովորույթներն ու ավանդույթները: Ավելին, մշակութային և ճանաչողական երթուղիները կարող են ընդգրկել նաև մասնակցություն մշակութային միջոցառումներին, այց թանգարաններ, համերգասրահներ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ և այլն[2]: Մշակութային ժառանգությունը ոչ նյութական և նյութական անշարժ ու շարժական ժառանգություն է, որպես համապատասխան արժեքների ամբողջություն, որը կրում է պատմական հիշողություն ու ազգային ինքնություն և ունի գիտական կամ մշակութային նշանակություն[3]:

Հայաստանի հին պատմությունը և հարուստ մշակութային ժառանգությունը գրավում են շատ զբոսաշրջիկների[4]:

Պատմամշակութային զբոսաշրջության զարգացման համար մեծ նշանակություն ունի ՀՀ մշակութային ժառանգությունը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության» ցանկում են ներառված Հաղպատի և Սանահինի (1996 թ.), Գեղարդի (2000 թ.) վանական համալիրները, Էջմիածնի եկեղեցիները և Մայր տաճարը, Զվարթնոցի հնագիտական տաճարը (2000 թ.)[5]:

Հայաստանը 2006 թ. մարտի 20-ին անդամակցեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» 2003 թ. կոնվենցիային: ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցուցակում են հայկական դուդուկը և դրա երաժշտությունը (2008 թ.), խաչքարերի արվեստը (2010 թ.), «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը (2012 թ.), ավանդական հացը՝ լավաշը (2014 թ.), ավանդական խմբային պարը՝ «Քոչարին» (2017 թ.), տառարվեստը և դրա մշակութային դրսևորումները (2019 թ.)[6]:

2010 թ. մարտի 11-ի N310-Ա որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատեց «ՀՀ ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը», որով հիմք դրվեց ՀՀ տարածքում ոչ նյութական մշակութային ժառանգության հաշվառման, իրավիճակի ուսումնասիրման գործընթացին, ինչպես նաև որոշվեց ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների առաջին ցանկը, որն այդ ժամանակ բաղկացած էր հետևյալ 24 արժեքից՝ «Սասնա ծռեր» էպոս, «Քոչարի», «Յարխուշտա» ավանդական խմբային պարեր, ավանդական հարսանեկան ծիսակատարություն, «Խավիծ» ճաշատեսակ, Կատիկի բարձրացում, տարեհացի խորհրդանշանային կիրառում և նախշազարդում, Սուրբ Սարգսի, Տեառնընդառաջի, Վարդավառի տոներ, ՀՀ Արագածոտնի մարզի Նիգավան գյուղի Սուրբ Թևաթորոսի պաշտամունք, ՀՀ Արագածոտնի մարզի Քասախ գյուղի Թուխ Մանուկի պաշտամունք, «Կռունկ», «Գացեք, տեսեք» երգեր, «Բատոլա» (ժողովրդական պարարվեստ, ծիսական-հարսանեկան պարերգ), ավանդական դարբնագործություն, խաչքարագործության վարպետություն, տոհմածառ, ժանեկագործություն, փայտե

[2] Tourism and Intangible Cultural Heritage, 2012, UNWTO, http://www.e-unwto.org/doi/book/10.18111/9789284414796

[2] International Council on Monuments and Sites official website, http://www.icomos.org/

[3] Cultural Heritage Act, Article 2, point 1, https://en.unesco.org/sites/default/files/bulgaria_culturalheritageact_2009_entof.pdf

[4] Հայաստանն աստվածաշնչյան երկիր է՝ ըստ որի Նոյի տապանը հանգրվանել է Արարատ լեռան վրա: Հայ ժողովուրդը սերում է Նոյի Հաբեթ որդուց, որի հետնորդներից են Հայկ Նահապետը, Արա Գեղեցիկը: Ըստ ավանդության՝ Նոյն Արարատ լեռան գագաթից իջել է Փոքր Մասիսին մերձակա հարթավայր և իջևանել մի վայրում, որը հետագայում կոչվել է Նախիջևան (առաջին կամ նախնական իջևան): Ըստ հայ և այլազգի պատմիչների՝ նա թաղված է հենց Նախիջևանում:

[5] Properties inscribed on the World Heritage List, http://whc.unesco.org/en/statesparties/am

[6] Representative List of the Intangible Cultural Heritage of Humanity of Armenia, https://ich.unesco.org/en/lists?country[]=00014&multinational=3&display1=inscriptionID#tabs

հմայիլի պատրաստման և կիրառման ավանդույթ, աշուղական սիրավեպ, թոնրի պատրաստման և կիրառման ավանդույթ, «Լավաշ» ավանդական հացի պատրաստում, նշանակություն և մշակութային դրսևորումներ, գաթայի պատրաստում և մշակութային դրսևորումներ[7]: 2018 թ.-ին նշված ցանկին ավելացան նաև հայկական տառարվեստը և դրա մշակութային դրսևորումները, մրգից օղիների պատրաստումը, մածունի պատրաստման ու կիրառման ավանդույթը, ավանդական գորգագործությունը, «Թամզարա» ժողովրդական պարը, թառն ու թառագործությունը, գինեգործությունը, «Սահարինը» (ավանդական երաժշտական մշակույթ, նվագարանային կատարողական արվեստ, ծիսական երաժշտություն)[8], իսկ 2019 թ.-ին՝ Սուրբ Թադեոս առաքյալի վանքի ուխտագնացությունը[9]: Այս պահի դրությամբ ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ընդհանուր թիվը 33 է:

ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 20-ի N 36-Ն որոշմամբ հաստատվեցին ՀՀ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի կազմման չափորոշիչները և դրանց հիման վրա կազմված ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը, որը բաղկացած էր 7 արժեքից՝ «Կարոս խաչ» վիպերգ, լարախաղացություն (փահլևանի խաղեր), «Վիճակի երգեր», «Ավետիս» (ժողովրդական բանահյուսություն, երաժշտաբանաստեղծական ժանր), «Խաչբուռ» (բնության և տնտեսության զարգացման մասին պատկերացումներ, ժողովրդական տոներ), ասեղնագործություն, «Բարեկենդան»[10]: 2019 թ.-ին նշվածներին գումարվեց ևս 5 արժեք՝ որդան կարմիր. հայկական որդանին առնչվող ավանդական գիտելիքներ, հմտություններ և փորձառություն, Գյումրու կլկլան (մուշուրբա), Ստվերների տիկնիկային թատրոն, պարկապզուկ (տիկ)՝ ժողովրդական նվագարանային արվեստ, կոխ ըմբշամարտ[11]:

ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 1-ի N 241-Ն որոշմամբ հաստատվեցին ՀՀ մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը: Ներկայում այդ ցանկում ընդգրկված են հետևյալ տարածքները՝ Արենի գյուղ՝ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ստորին հոսանքի երկու կողմում (նախկինում՝ Արփա), Գյումրի քաղաք՝ Շիրակի մարզում (նախկինում՝ Կումայրի, Ալեքսանդրապոլ, Լենինական), Մեղրի քաղաք՝ Սյունիքի մարզում (նախկին անվանումը՝ Արևիք գավառ), Աշնակ գյուղ՝ Արագածոտնի մարզում, Գորիս քաղաք՝ Սյունիքի մարզում, Խաչիկ գյուղ՝ Վայոց ձորի մարզում, Վերին Դվին գյուղ՝ Արարատի մարզում[12]:

Մշակութային տարածքներն անհրաժեշտ է ներառել զբոսաշրջային երթուղիներում, իսկ ինչ վերաբերում է մշակութային արժեքներին, ապա դրանք պետք է ավելի ճանաչելի դարձնել՝ «գովազդելով» տարբեր միջոցառումների շրջանակում: Օրինակ՝ բազմաբնույթ փառատոնների ժամանակ կարելի է բեմադրել ազգային պարեր՝ «Քոչարի» և «Յարխուշտա», լարախաղացություն, ցուցադրել խաչքարագործության, ասեղնագործության նմուշներ, թոնրում լավաշ թխելու, գաթա պատրաստելու եղանակներ և այլն: Կարելի է նաև կազմակերպել թեմատիկ փառատոներ: Եկեղեցական տոների՝ Սուրբ Սարգսի,

[7] «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը», ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 11-ի N 310-Ա որոշման հավելված 2,https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105428

[8] «ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. փետրվարի 15-ի N 144-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119883

[9] «ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2019 թ. մարտի 14-ի N 238-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=129330

[10] «ՀՀ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի կազմման չափորոշիչները և դրանց հիման վրա կազմված ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը», ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 20-ի N 36-Ն որոշման հավելված 2, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=65356

[11] «ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 20-ի N 36-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 21-ը փետրվարի 2019 թ. N 130-Ն որոշման հավելված, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128612

[12] ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 1-ի N 241-Ն որոշումը «ՀՀ մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը» հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=134827

Տեառնընդառաջի, Վարդավառի մեծ շուքով նշումը նույնպես կարող է նպաստել ինչպես ներքին, այնպես էլ ներգնա զբոսաշրջության աճին: Այսպիսով՝ մշակութային արժեքների պահպանության և մշակութային զբոսաշրջության զարգացման համար այս արժեքներին պետք է նոր կյանք հաղորդել:

Մշակութային ժառանգության հիման վրա կարող է զարգանալ ոչ միայն պասիվ պատմամշակութային զբոսաշրջությունը, որի հիմնական նպատակն այլ երկրների պատմությանն ու մշակույթի հետ ծանոթանալն է, այլև փորձառականը: Սա զբոսաշրջային նոր ուղղություն է, որ զարգանում է վերջին տարիներին և ենթադրում ծանոթություն դեստինացիայի մշակույթին՝ ակտիվ շփվելով տեղի բնակիչների հետ, մասնակիցը դառնալով տարբեր գործողությունների՝ հիմնված մշակութային ժառանգության վրա: Օրինակ՝ սա կարող է ենթադրել մասնակցություն մշակութային իրադարձություններին, տարբեր արհեստների իրականացմանը, ազգային խոհանոցի տարբեր ուտելիքների պատրաստմանը և այլն: Այս դեպքում զբոսաշրջիկն անմիջապես ներգրավվում է զբոսաշրջային ծառայությունների արտադրության գործընթացում, կարողանում խորությամբ ծանոթանալ տվյալ վայրի մշակութային արժեքներին, ձեռք բերել նոր փորձառություն և տպավորություններ: Օրինակ՝ *ՀՀ մշակութային ժառանգության հիման վրա փորձառական զբոսաշրջությունը կարող է ներառել դարբնագործության, խաչքարագործության, գորգագործության, ասեղնագործության, գինեգործության, հայկական ուտելիքների պատրաստման, լավաշի և գաթայի թխման, թառագործության, հայկական երգերի ու պարերի ուսուցման և այլ գործողությունների ընդգրկմամբ զբոսաշրջային արդյունքի մշակում ու կազմակերպում:*

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության տրամադրած տվյալների՝ 2020 թ. դրությամբ ՀՀ-ում եղել են 24225 պատմամշակութային հուշարձաններ (աղյուսակ 1):

2019 թ. դրությամբ ՀՀ-ում գործել է 100 թանգարան՝ նախորդ տարվա 104-ի փոխարեն, որից 63-ը՝ Երևանում[13]: Թանգարանների ֆոնդերի քանակը կազմել է 2802300 միավոր, որի 91.5%-ը՝ Երևանում[14]: Թանգարաններ այցելուների թվաքանակը 2019 թ. կազմել է 2366115 մարդ՝

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառումն ըստ ՀՀ մարզերի և Երևանի, միավոր[15]

Վայրը	Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների քանակը	Հուշարձանների քանակն ըստ մարզի հիմնական ցուցակի	Հուշարձանների քանակն ըստ 2007 թ. պետական ցուցակի
Երևան	996	977	19
Արագածոտն	1829	1796	33
Արարատ	906	906	0
Արմավիր	420	420	0
Գեղարքունիք	5277	5270	7
Լոռի	3046	3045	1
Կոտայք	3208	3208	0
Շիրակ	2349	2349	0
Սյունիք	2818	2812	6
Վայոց ձոր	1380	1373	7
Տավուշ	1996	1996	0
Ընդամենը ՀՀ	**24225**	**24152**	**73**

[13] ՀՀ սոցիալական վիճակը 2019 թ., էջ 577, https://www.armstat.am/file/article/soc_vich_2019_25.pdf
[14] Նույն տեղում, էջ 578:
[15] Տեղեկությունները տրամադրել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, տվյալները հիմնված են Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի հաշվարկների վրա:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Թանգարանների այցելուների թիվն ըստ ՀՀ մարզերի և Երևանի 2014-2019 թթ., մարդ[16]

Վայրը	2014	2015	2016	2017	2018	2019
ք. Երևան	1 882 591	2 043 720	2 050 477	2 529 508	2 631 609	2093821
Արագածոտն	5 412	6 987	5 412	6 987	8 875	11000
Արարատ	20 425	18 959	20 460	18 886	18 164	25870
Արմավիր	39 479	42 362	33 664	38 657	57 361	38569
Գեղարքունիք	3 534	3 181	3 003	3 237	3 244	5116
Լոռի	24 142	28 978	26 361	22 670	32 421	54035
Կոտայք	12 893	14 000	13 844	8 901	15 608	17170
Շիրակ	86 225	86 137	107 205	112 663	131 201	85110
Սյունիք	9 488	10 082	10 082	8 507	11 049	18488
Վայոց ձոր	1 160	831	789	1 339	989	3159
Տավուշ	6 058	6 115	5 240	6 789	11 043	13777
Ընդամենը ՀՀ	2091407	2261352	2276537	2758144	2921564	2366115

նախորդ տարվա 2921564-ի դիմաց, որի շուրջ 88%-ը՝ Երևանում[17]: Վերջին տարիներին թանգարանների այցելուների թիվն աճել է. 2014 թ.-ի համեմատ 2019 թ.-ին՝ մոտ 13%-ով (աղյուսակ 2): 2019 թ. Հայաստանում եղել են 3 հանրապետական և 670 հանրային գրադարաններ՝ 17.9 մլն գրքային ֆոնդով[18], 26 թատրոն՝ 565.5 հազար այցելուով[19]: Ցավոք, առանձին չի հաշվառվել, թե, օրինակ, թանգարանների կամ թատրոնների այցելուների քանի տոկոսն են եղել ՀՀ ներգնա զբոսաշրջիկներ:

2015 թ. մեկնարկեց «Իմ Հայաստան. մշակութային զբոսաշրջությունը Հայաստանում» ծրագիրը, որն իրականացվում է ՀՀ կառավարության, ԱՄՆ-ի ՄԶԳ և Սմիթսոնյան ինստիտուտի կողմից: Ծրագրի արժողությունը 5 մլն ԱՄՆ դոլար է, և այն կոչված է ոչ միայն խթանելու Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացումը, այլև ընդլայնելու երկրի գյուղական համայնքների տնտեսական զարգացման հնարավորությունները՝ դրանով իսկ նպաստելով նաև ՀՀ տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը[20]: Ծրագիրը միտված է Հայաստանի մշակութային ժառանգության մասին գիտելիքների տարածմանը, հայկական մշակութային վայրերի և դրանց գործունեության կենսունակության ապահովմանը: «Իմ Հայաստանը» մշակել է թեմատիկ մշակութային երթուղիներ, որոնք ցույց են տալիս մեր երկրի կենդանի մշակութային ժառանգության բազմազանությունը (գինու համտես Վայոց ձորում, այցելություն Հայաստանի բարձրավանդակներ)[21], գործընկերների հետ համատեղ կազմել է թվային ուղեցույց (օրինակ՝ Վայոց ձորի մասին[22]):

Հաշվի առնելով Հայաստանի հարուստ մշակութային ժառանգությունը, հինավուրց պատմությունը՝ կարելի է վկայել, որ մեծ են հնարավորություններն ու հեռանկարները պատմամշակութային և փորձառական զբոսաշրջության զարգացման համար, սակայն այդ նպատակով հարկ է իրակա-

[16] ՀՀ սոցիալական վիճակը 2017 թ., էջ 557, https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_25.pdf, ՀՀ սոցիալական վիճակը 2019 թ., էջ՝ 587, https://www.armstat.am/file/article/soc_vich_2019_25.pdf

[17] ՀՀ սոցիալական վիճակը 2019 թ., էջ 587, https://www.armstat.am/file/article/soc_vich_2019_25

[18] Նույն տեղում, էջ 526, https://www.armstat.am/file/article/soc_vich_2019_19.pdf

[19] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2020, էջ՝ 173, https://www.armstat.am/file/doc/99520898.pdf

[20] Մեկնարկել է «Իմ Հայաստան. մշակութային զբոսաշրջությունը Հայաստանում» ծրագիրը, 2015, http://www.gov.am/am/news/item/12231/

[21] «Իմ Հայաստան» ծրագրի մասին, https://myarmenia.si.edu/hy/about-us/, https://myarmenia.si.edu/hy/guide/experiences/, https://myarmenia.si.edu/hy/guide/routes/

[22] Վայոց Ձոր էլեկտրոնային գիրք, https://view.joomag.com/%D5%80%D5%8E%D5%80-%D5%B4%D5%B8%D6%82%D5%AC%D5%BF%D5%AB%D5%B4%D5%A5%D5%A4%D5%AB%D5%A1-%D5%A7%D5%AC-%D5%A3%D6%80%D6%84%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B7%D5%A1%D6%80%D6%84-%D4%B3%D5%AB%D6%80%D6%843-%D5%8E%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%81%D5%B8%D6%80/0709107001498552710?short

նացնել մի շարք կարևոր քայլեր, մասնավորապես.

- Բարձրացնել մարքեթինգային գործունեության արդյունավետության մակարդակը՝ մշակութային զբոսաշրջային արդյունքը միջազգային շուկաներում առաջ մղելու, Հայաստանը որպես հին ու հարուստ մշակույթ ունեցող երկիր ներկայացնելու համար: Այս առումով, պետք է նշել, որ ՀՀ պաշտոնական զբոսաշրջային կայքէջում (https://armenia.travel/en) առկա տեղեկությունները չափազանց սահմանափակ են: Անհրաժեշտ է բացել առանձին խորագիր մշակութային ժառանգության վերաբերյալ, որի ներքո ըստ ենթաբաժինների կներկայացվեն ոչ միայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցուցակում ընդգրկված, այլև մյուս (պատմամշակութային ժառանգություն, արհեստներ ու արվեստներ, մշակութային տարածքներ և այլն) արժեքները:
- Պատմամշակութային զբոսաշրջության զարգացման համար էական նշանակություն ունեն համապատասխան հուշարձանների պահպանումն ու վերականգնումը: Գաղտնիք չէ, որ այսօր շատ հուշարձաններ ոչ բարվոք վիճակում են կամ մարդկային գործոնի հետևանքով վնասներ են կրում: Պատմամշակութային ժառանգության պահպանումն և դրա հիման վրա զբոսաշրջության զարգացումը կայուն զբոսաշրջություն ապահովելու կարևորագույն միտումներից են:
- Ընդլայնել առկա երթուղիները, մշակել նոր երթուղիներ՝ ներառելով ավելի շատ պատմամշակութային հուշարձաններ:
- Մշակել զբոսաշրջային քարտեզներ և ծալազդեր՝ ըստ պատմամշակութային հուշարձանների և համապատասխան երթուղիների:
- ՀՀ կառավարության սահմանած մշակութային արժեքներն ու տարածքները ներառել երթուղիներում՝ ձևավորելով նոր զբոսաշրջային արդյունք, կազմակերպել թեմատիկ փառատոներ՝ նպաստելով վերոնշյալ ազգային մշակութային արժեքների պահպանմանն ու հանրայնացմանը:
- Զբոսաշրջիկների համար ընդլայնել մշակութային, ժամանցային հնարավորությունները երկրի ամբողջ տարածքում:
- Մշակութային ժառանգության վրա հիմնված փորձառական զբոսաշրջության զարգացման նպատակով մշակել առանձին, ընդգծված զբոսաշրջային արդյունք՝ դա նույնպես գովազդելով զբոսաշրջային կայքի միջոցով:
- Համավարակի պայմաններում միջազգային մի շարք մշակութային հաստատություններ իրականացնում էին առցանց (վիրտուալ) տուրեր: ՀՀ մշակութային հաստատությունները նույնպես պետք է կազմակերպեն առցանց տուրեր, ներկայացումներ ինչպես ներքին, այնպես էլ ներգնա զբոսաշրջիկների համար, ընդ որում, դա պետք է անեն մշտապես՝ անկախ համավարակից:
- Մշակել էթնոմշակութային զբոսաշրջության զարգացման ռազմավարական ծրագիր՝ մշակութային ժառանգության պահպանման և զբոսաշրջության զարգացման նպատակով:

Այսպիսով՝ մշակութային ժառանգության հիման վրա պատմամշակութային և փորձառական զբոսաշրջության զարգացումը ՀՀ զբոսաշրջային գերակայություններից է, և հատկապես ներկա պայմաններում կարևորվում է ակտիվ մարքեթինգային և այլ քայլերի իրականացումը ներքին ու ներգնա զբոսաշրջության զարգացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Իմ Հայաստան» ծրագրի մասին, https://myarmenia.si.edu/hy/about-us/, https://myarmenia.si.edu/hy/guide/experiences/, https://myarmenia.si.edu/hy/guide/routes/
2. «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը», ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 11-ի N 310-Ա որոշման հավելված 2, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=105428
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2020, https://www.armstat.am/
4. «ՀՀ անհապաղ պաշտպանության կարիք ունեցող ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերի կազմման չափորոշիչները և դրանց հիման վրա կազմված ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը», ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 20-ի N 36-Ն որոշման հավելված 2, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=65356
5. «ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. փետրվարի 15-ի N 144-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=119883
6. «ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2019 թ. մարտի 14-ի N 238-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=129330
7. «ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 20-ի N 36-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 21-ը փետրվարի 2019 թ. N 130-Ն որոշման հավելված, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128612
8. «ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 1-ի N 241-Ն որոշումը «ՀՀ մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը» հաստատելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=134827
9. ՀՀ սոցիալական վիճակը, 2017 թ., 2019 թ., https://www.armstat.am/
10. Մեկնարկել է «Իմ Հայաստան. մշակութային զբոսաշրջությունը Հայաստանում» ծրագիրը, 2015, http://www.gov.am/am/news/item/12231/
11. Վայոց ձոր, էլեկտրոնային գիրք, https://view.joomag.com/%D5%80%D5%8E%D5%80-%D5%B4%D5%B8%D6%82%D5%AC%D5%B-F%D5%AB%D5%B4%D5%A5%D5%A4%D5%AB%D5%A1-%D5%A7%D5%AC-%D5%A3%D6%80%D6%84%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B7%D5%A1%D6%80%D6%84-%D4%B3%D5%AB%D6%80%D6%843-%D5%8E%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%81%D5%B8%D6%80/070910700149855271 0?short
12. Վարդանյան Ա., «Նախիջևան» տեղանվան ստուգաբանության շուրջ, էջ 1-6, http://language.sci.am/sites/default/files/conference/nakhijevan_teghanvan_stowgabanowtyan_showrj.pdf
13. Cultural Heritage Act, Article 2, point 1, https://en.unesco.org/sites/default/files/bulgaria_culturalheritageact_2009_entof.pdf
14. International Council on Monuments and Sites official website, http://www.icomos.org/
15. Properties inscribed on the World Heritage List, http://whc.unesco.org/en/statesparties/am
16. Representative List of the Intangible Cultural Heritage of Humanity of Armenia, https://ich.unesco.org/en/lists?country[]=00014&multinational=3&display1=inscriptionID#tabsTourism and Intangible Cultural Heritage, 2012, UNWTO, http://www.e-unwto.org/doi/book/10.18111/9789284414796

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

КУЛЬТУРНОЕ НАСЛЕДИЕ РА КАК ВАЖНЫЙ ФАКТОР РАЗВИТИЯ ТУРИЗМА

Армения имеет древнюю историю, богатое культурное наследие, что привлекает множество туристов. Список всемирного наследия ЮНЕСКО включает монастырские комплексы Ахпат, Санаин, Гегард, церкви Эчмиадзина, Кафедральный собор и Археологический храм Звартноц. Репрезентативный список нематериального культурного наследия человечества ЮНЕСКО включает армянский дудук и его музыку, искусство армянских хачкаров, эпос «Сасна црер» или «Сасунци Давид», традиционный армянский хлеб - лаваш, «Кочари» - традиционный армянский групповой танец, искусство армянских букв и его культурное выражение. В Армении 24225 памятников истории и культуры, но не все они включены в туристические маршруты. В статье представлен ресурсный потенциал развития историко-культурного и экспериментального туризма в Республике Армения, внесены предложения по развитию новых маршрутов, включающих территории и ценности культурного наследия Республики Армения, организации фестивалей, реализации маркетинговых мероприятий и др.

Ключевые слова: *историко-культурный туризм, экспериментальный туризм, культурное наследие, культурная зона, памятник, ЮНЕСКО, маркетинг, фестиваль*

Gayane TOVMASYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics

MARKETS AND COMPETITION

CULTURAL HERITAGE OF THE RA AS AN IMPORTANT FACTOR FOR TOURISM DEVELOPMENT

Armenia has an ancient history, rich cultural heritage, which attracts many tourists. The UNESCO World Heritage List includes the monastic complexes of Haghpat, Sanahin, Geghard, the churches of Etchmiadzin, the Mother Cathedral, and the Zvartnots Archaeological Cathedral. The UNESCO representative list of the intangible cultural heritage of humanity includes the Armenian duduk and its music, the art of Armenian khachkars, Sasna Tsrer or Sasuntsi Davit epic, the traditional Armenian bread - lavash, kochari - the traditional Armenian group dance, the Armenian letter art and its cultural expression. There are 24,225 historical and cultural monuments in Armenia, but not all of them are included in tourist routes. The resource potential of the development of historical-cultural and experiential tourism in the Republic of Armenia is presented in the paper, proposals are made concerning the development of new routes including the areas and the values of the cultural heritage of the Republic of Armenia, organization of festivals, implementation of marketing events etc.

Keywords: *historical and cultural tourism, experiential tourism, cultural heritage, cultural area, monument, UNESCO, marketing, festival*